76-ՐԴ ՆԻՍՏ

27 մարտի 1919թ.

Բացվում է երեկոյան ժ. 9-ին՝ նախագահությամբ *Ա. Սահակյանի,* մինիստրական օթյակում են Մինիստր-նախագահը, ներքին գործերի, արտաքին գործերի և խնամատարության մինիստրների օգնականները:

Ա. Խոնդկարյան - Առաջարկում է նախորդ նիստերում ընդհատված օրինագծերի քննությունը շարունակել՝ նկատի ունենալով, որ այս նիստն արտակարգ չէ:

Նախագահ - Նախագահությունն այս նիստը որոշել է որպես արտակարգ և նշանակել է հատկապես խորհրդարանի ընտրության օրինագծի համար:

Զուբյան - Ես անդամ եմ նախագահության, սակայն միայն նոր եմ իմանում այս նիստի արտակարգ լինելու մասին:

Նախագա հ - Պ. Տեր-Խաչատրյան, դուք ինչպես, չգիտե՞ք որ այսօրվա նիստը արտակարգ է:

Գ. Տեր-Խաչատրյան - Ես չեմ իմացել արտակարգ լինելու մասին, սակայն գիտեմ այն, որ այս նիստին պիտի քննվի միայն և միայն խորհրդարանի ընտրության օրինագիծը:

Խոնդկարյան - Ըստ երևույթին նախագահությունն աչառու վերաբերմունք ունի դեպի յուր այս կամ այն անդամը և առհասարակ դեպի խորհրդարանի որոշ ֆրակցիաները: Այդ վերաբերմունքի համար կարող էինք մենք այս նիստին չմասնակցել, սակայն չուզենալով պրովոկացիաների պատճառ դառնալ, մենք ետ ենք կանչում մեր անդամին նախագահությունից:

Հ. Ազատյան - Մենք ևս մեր ձայնը միացնում ենք էսէռների բողոքին, քանի որ Զուբյանի նախագահության կազմի մեջ մտնելու առաջարկը մենք ևս պաշտպանում ենք:

Ս. Խաչատրյան - Օրենսդրական հանձնաժողովի կողմից զեկուցում է խորհրդարանի ընտրության օրինագծի մասին:

Օրինագիծը ռուսական սահմանադիր ժողովի ընտրության օրենքն է՝ համապատասխան փոփոխություն կատարած, ուստի և զեկուցողը հարց է տալիս խորհրդարանին՝ կարդալ ամբողջ օրինագի՞ծը, թե՞ միայն այն հոդվածները, որ փոփոխության են ենթարկված:

Այդ միջոցին դահլիճ է մտնում Փարիզի խաղաղարար կոնֆերանսի անդամ, ամերիկացի կապիտան պ. Խաչատրյան:

Նախագահ - Առաջարկում է ողջունել մեծ պետության ներկայացուցչին:

Դահլիճը ծափերով ողջունում է պ. Խաչատրյանին, բացի ձախակողմից:

Ս. Խաչատրյան - Ի պատասխան նախագահի ողջույնի ճառի ասում է հետևյալը.

«Չնայած Ամերիկա աշխարհագրական դիրքով հեռու ընկած է, սակայն նա շատ մոտիկ կզգա իրեն հային: Նա գիտե հայերու կրած բռնություններու, տանջանքներու ու կոտորածներու պատմությունը, նա շատ հոգատար է այժմ դեպի Հայաստանը, որին բախտը արդեն կարծես թե սկսել է ժպտալ, ճիշտ այնպես, որպես փոթորկալի անձրևեն ետքը գունագեղ ծիածանը կսկսե կամարակալել երկնքին երեսովը:

Ես ինձ շատ բախտավոր կզգամ, քանի որ առաջին անգամն է, որ Հայաստանի խորհրդարանում եմ գտնվում»:

Գ. Տեր-Խաչատրյան - Կարիք չկա ամբողջ օրինագիծը կարդալ, բավական է միայն փոփոխելի հոդվածների ընթերցումը:

Հ. Ազատյան - Առաջարկում է օրինագիծն ամբողջությամբ, գոնե երկու ընթերցումով, լսել:

Հ. Բուդաղյան - Հանձնաժողովների և կառավարության արած փոփոխությունները կարդալ և դրանով բավականանալ:

Նկատի ունենալով, որ ֆրակցիաներից մեկը (սոց[ցիալ]-դեմ[ոկրատիական]) պնդում է յուր առաջարկության վրա, որոշվում է առանց քվեարկության անցնել օրինագծի ամբողջական ընթերցմանը:

Վեճ է առաջացնում զորքի մասնակցության հարցը: Որոշվում է թույլ չտալ զորքին՝ մասնակցելու խորհրդարանի ընտրություններին: Ուշ լինելու պատճառով որոշվում է վաղը ժ. 12-ին ցերեկվա նիստ գումարել՝ շարունակելու օրինագծի ընթերցումը:

Մինիստր-նախագահ - Հայտարարում է, որ զորական մինիստր Հախվերդյանը թողել է իր պաշտոնը, նրա փոխարեն հրավիրված է գնդապետ, այսօր մինիստրական խորհրդում գեներալի աստիճանի արժանացած, Արարատյանը, օգնականներ՝ գեներալ Սիլիկյան և Դրո:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 12-ին:

«Հայաստանի աշխատավոր», 9 ապրիլի 1919թ.

77-ՐԴ ՆԻՍՏ

28 մարտի 1919թ., ցերեկ

Նիստը բացվում է ցերեկվա ժամը 12-ին՝ նախագահությամբ *Ա. Սահակյանի:*

Ս. Խաչատրյան - Շարունակում է օրինագծի (խորհրդարանի ընտրության) ընթերցումը:

Նիստը փակվեց ցերեկ. ժ. 3-ին:

«Հայաստանի աշխատավոր», 9 ապրիլի 1919թ.

78-ՐԴ ՆԻՍՏ

28 մարտի 1919թ., երեկոյան

Նիստը բացվում է երեկոյան ժ. 6-ին՝ նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրական օթյակում են՝ Մինիստր-նախագահ, ներքին գործերի, խնամատարության մինիստրները և ներքին գործերի ու խնամատարության մինիստրների օգնականները:

Ս. Խաչատրյան - Շարունակում է օրինագծի ընթերցումը:

Որոշվում է ընտրությունները նշանակել հունիսի 21-ին, 22-ին և 23-ին: Կենտրոնական հանձնաժողովի (ընտրության վերաբերմամբ) նախագահ ընտրվեց պատգ. Ս. Խաչատրյանը:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 12-ին:

«Հայաստանի աշխատավոր», թիվ 40: 9 ապրիլի 1919թ.

79-ՐԴ ՆԻՍՏ

29 մարտի 1919թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 8-ին՝ նախագահությամբ *Ա. Սահակյանի.* մինիստրական օթյակում են՝ Մինիստր-նախագահի պաշտոնակատարը, արտաքին գործոց, խնամատարության, պարենավորման, զորական, ֆինանսների, լուսավորության մինիստրները, ներքին գործոց մինիստրի պաշտոնակատարը և լուսավորության, ներքին գործոց ու խնամատարության մինիստրների օգնականները:

Մինիստր-նախագահի պաշտոնակատար- Զեկուցում է գեն. Տոմսոնի հետ կառավարության ունեցած տեսակցության և մտքերի փոխանակության մասին:

Ֆինանսների մինիստր - Զեկուցելու էր պետության ֆինանսական վիճակի մասին, սակայն նկատի ունենալով, որ շատ ուշ է հայտնված իրեն այդ մասին, ներողություն է խնդրում, անկարող է այժմ մի որոշ բան ասել և խոստանում է մի շաբաթից հետո տալ հիշյալ նյութի մասին զեկուցում:

Վ. Տեր-Թորոսյան - Զեկուցում է սերմացու գնելու համար պարենավորման մինիստրի անունով 50 միլիոն ռուբլու վարկ բանալու օրինագծի մասին:

Պարենավորման մինիստր - Տալիս է տեղեկություններ սերմացուի կարիքի, ունեցած քանակի մասին և շեշտում այն հանգամանքը, որ մինիստրությունը ստանում է բազմաթիվ դիմումներ զանազան շրջաններից, որոնցով խնդրում են սերմացու կամ փող՝ տեղերում սերմացու գնելու համար:

Մինիստրի առաջարկով օրինագիծը քննվում է շտապողաբար:

Խոսում են՝ *Ալ. Մելիք-Աղաջանյան, Եփ. Սարգսյան, և Ա. Խոնդկարյան.* Բոլորն էլ շեշտում են այն, որ սերմացուի հարցը ուշացել է. այժմ նպատակահարմար է փող բաժանել՝ տեղերում շտապողաբար սերմացու ձեռք բերելու և խրախուսել բանջարաբուծությունը՝ գետինը անմշակ չթողնելու համար:

Հ. Տեր-Հակոբյան - Ձգձգման ու ուշացման մեջ մեղադրում է մինիստրության պաշտոն ստանձնած անձանց, որոնք երկար չեն մնում պաշտոնի մեջ և այդ պատճառով պարեն. մինիստրությունը հարափոփոխ ընթացքի մեջ չի կարողանում ուշադրության կենտրոններ ունենալ:

Պարենավորման մինիստր - Չնայած ուշացրել ենք, բայց չպիտի շեշտել այդ հանգամանքը և առաջ բերել դժվարություններ: Թիֆլիսում գնել ենք արդեն բանջարեղենի սերմեր: Նույն տեղում կազմված կա պարենավորման հանձնախումբ հինգ հոգուց բաղկացած, որոնց տրվում է վարձատրություն:

Երկրագործական բաժնի վարիչ - Արդարանում է իր և յուր բաժանմունքի վրա սերմացուի խնդրում բարդած մեղադրանքներից:

Ընդհանուր հիմունքների մասին վիճաբանությունը վերջանում է և խորհրդարանն անցնում է օրինագծի կետ առ կետ ընթերցմանը:

Գ-րդ ընթերցումով ընդունվում և հանձնվում է խմբագրական հանձնաժողովին:

Վ. Տեր-Թորոսյան - Զեկուցում է Թիֆլիսի Հայ ազգային խորհրդին կից փոստհեռագրական սեկցիայի հինգ անդամներին ռոճիկ տալու համար ՆԳ մինիստրի անունով 15.000 ռուբլու վարկ բանալու օրինագծի մասին:

Օրինագիծն ընդունվում է և վերջնականապես հաստատվում:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 12-ին:

«Հայաստանի աշխատավոր», 11 ապրիլի 1919թ.

80-ՐԴ ՆԻՍՏ

31 մարտի 1919թ.

Բացվում է երեկոյան ժ. 8 անց կեսին՝ նախագահությամբ *Սահակյանի.* մինիստրական օթյակումն են՝ Մինիստր-նախագահի պաշտոնակատարը, ՆԳ մինիստրի պաշտոնակատարը և խնամատարության մինիստրի օգնականը:

Արվում են պառլամենտի ընտրության օրինագծի վերաբերմամբ փոփոխություններ, որից հետո օրինագիծն ամբողջությամբ քվեարկվում է և միաձայն ընդունվում:*

Օրենքն ուժի մեջ է մտնում 1919թ. ապրիլի 1-ից: Հենց վաղվանից պիտի տպագրվի ռուսերեն, իսկ հայերեն թարգմանությունը հանձնվում է խմբագրական հանձնաժողովին և խորհրդարանի նախագահությանը:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 10-ին:

«Հայաստանի աշխատավոր», 13 ապրիլի 1919թ.

81-ՐԴ ՆԻՍՏ

1 ապրիլի 1919թ.

Հայաստանի Խորհրդարանի ապրիլի 1-ի նիստում քննարկվել և ընդունվել է օրենք համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովին օժանդակելու մասին:

ՀԱԱ, ֆ.200, ց. 1, գ.86, թ 29: Տպագրական օրինակ:

82-ՐԴ ՆԻՍՏ

3 ապրիլի 1919թ.

Բացվում է երեկոյան ժ. 8 և կեսին՝ նախագահությամբ *Սահակյանի:*

Մինիստրական օթյակումն են՝ Մինիստր-նախագահը, ներքին գործոց, խնամատարության և իրավարարության մինիստրները, խնամատարության ու ներքին գործոց մինիստրների օգնականներն ու զորական մինիստրի օգնական Դրոն:

Խնամ. մին. - Նկարագրում է այն քաոսային վիճակը, որի մեջ եղել է խնամատարության մինիստրությունն իրենից առաջ և շեշտում այն գործունեությունն ու աշխատանքը, որին ձեռնարկել է ինքը մինիստրությունը կարգավորելու և աշխատանքը արդյունավոր դարձնելու համար:

Բժ. Գրո - Զեկուցում է սպասվող համաճարակ հիվանդությունների դեմ կռվելու համար խնամատարության մինիստրի անունով 3 միլ. վարկ բանալու օրինագծի մասին:

Հ. Ազատյան - Հիմնվելով մինիստրի տված տեղեկությունների ու փաստերի վրա, քննադատում է խնամատարության մինիստրությունը և առաջարկում է փո-

* Հայաստանի պառլամենտի ընտրությունների մասին օրենքը տես հավելվածում: Ծանոթ. կազմ.:

խել այն ամբողջապես: Այդ դեպքում միայն իրենց ֆրակցիան կհամաձայնի բանալ առաջարկված վարկը.

Խնամ. մին. - Հակաճառում է Ազատյանին և շեշտում այն, որ մինիստրությունը քաղաքային դրության մեջ լինելու երևույթը առաջ է եկել ոչ թե անձնավորությունների անպարտաճանաչությունից, այլ օբյեկտիվ պայմաններից, որ ուրիշ լավ դրություն չէին կարող ստեղծել:

Ա. Խոնդկարյան - Նույնպես քննադատում է մինիստրության ու մինիստրի ճառերը և դուրս բերում այն եզրակացությունը, որ քանի դեռ մինիստրության մեջ դրությունը նույնությամբ կշարունակվի՝ իրենք դեմ կլինեն նոր վարկի:

Օրինագիծը քվեարկությամբ ընդունվում է և վերջնականապես հաստատվում:

Իրավ. մին.- Ձեկուցում է ա) կարևոր գործերի մի երկրորդ քննիչ ունենալու, բ)նոր բացվող հաշտարար դատարանների դատավորների ու քննիչների և սրանց գրասենյակները կահավորելու համար ընդունված նորմայով վարկ բանալու օրինագծերի մասին:

Օրինագծերը շտապողաբար ընդունվում են և վերջնականապես հաստատվում:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 12-ին:

«Հայաստանի աշխատավոր», 20 ապրիլի 1919թ.

83-ՐԴ ՆԻՍՏ

4 ապրիլի 1919թ.

Հայաստանի Խորհրդարանի ապրիլի 4-ի նիստում քննարկվել և ընդունվել են օրենքներ. ա) Հայաստանի Հանրապետության բանտարկյալների սննդադրամը ավելացնելու մասին, բ) Տաժանակիր աշխատանքի դատապարտված Աղաբեկ Մահմեդ Ֆեյզուլլա-օղլու պատիժը մեղմացնելու մասին, գ) Տաժանակիր աշխատանքի դատապարտված Սերոբ Մարգարյանի պատիժը մեղմացնելու մասին, դ) Տաժանակիր աշխատանքի դատապարտված Լյուդվիգ Հովհաննիսյանի ներման մասին, ե) Տաժանակիր աշխատանքի դատապարտված եղբայրներ Ջավադ, Գևորգ և Արմենակ Դարբինյանցների ներման մասին:

ՀԱԱ, ֆ.200, ց. 1, գ.86, թ 28-30: Տպագրական օրինակ:

84-ՐԴ ՆԻՍՏ

8 ապրիլի 1919թ.

Հայաստանի Խորհրդարանի ապրիլի 8-ի նիստում քննարկվել և ընդունվել են օրենքներ. ա) Արտաքին գործոց նախարարության նախահաշվի հոդվածի փոփոխման մասին, բ) Արտաքին գործոց նախարարության նախահաշվի փոփոխման մասին, գ) Խնամատարության նախարարությունը Խնամատարության և աշխատանքի նախարարության վերածելու մասին, դ) Ակցիզային կանոնադրության 488, 508 և 23 հոդվածները վերացնելու մասին:

ՀԱԱ, ֆ.200, ց. 1, գ.86, թ 30-31: Տպագրական օրինակ:

85-ՐԴ ՆԻՍՏ

11 ապրիլի 1919թ.

Երևան, ապր. 11.- Պառլամենտը ձայների մեծամասնությամբ չի ընդունել Մինիստր-նախագահ Քաջազնունու հրաժարականը, որ պատճառաբանված էր հոգնածությամբ: Դաշնակցական, ժողովրդական և թուրք ֆրակցիաների առաջարկով Մինիստր-նախագահին տրվել է երկարատև արձակուրդ: Նույն նիստում պառլամենտը Հ. Սպենդիարյանին հաստատել է դատաստանական պալատի նախագահի պաշտոնում, իսկ Լեսկովին՝ նույն պալատի անդամ: Պառլամենտը հաստատել է Պոլսի մեր դիվանագիտական ներկայացուցչության նախահաշիվը 1919թ. համար 125.000 ռ., ընդունվել է ֆինանսների մինիստրի օրինագիծը՝ պետական պաշտոնյաներին հավելյալ մի ամսվա ռոճիկ տալու մասին, բայց հունվարից հետո պաշտոնի անցած մարդիկ պիտի ավելի քիչ ստանան տոկոսային հաշվով, ի նկատի ունենալով ծառայության ժամանակը: Օրինագիծը վերաբերում է նաև սպաներին, զինվորներին, դասային աստիճանավորներին, գթության քույրերին և գործող դպրոցների դասատուներին: Ընդունվեց և քաղաքացիական մասի պաշտոնյաներին, որոնք հիվանդացել են տարափոխիկ հիվանդություններով, միանվագ հատկացնել 750 ռ., իսկ մեռածների ընտանիքներին՝ 1.000: Այդ նպատակով Մինիստր-նախագահին հատկացվելու է 150.000 ռ. և նպաստը տրվելու է համապատասխան մինիստրների առաջարկով:

Սոց. դեմոկրատական ֆրակցիայի հարցմանը, որ վերաբերում էր Հայաստանում ստացած մազութի գողության, ներքին գործոց մինիստրի օգնական Մանասյանը հայտարարեց, որ առայժմ պարզված է մի ցիստերն մազութի պակաս, որի պատճառով ինժ. Մալխասյանը հեռացված է պաշտոնից և պատասխանատվության է կանչվել: Հետագա քննությունը կպարզի, թե արդյոք գողություն է կատարվել, թե՞ զանազան հանգամանքներից ստիպված ինժ. Մալխասյանը մազութը հանձնել է վրաց իշխանության:

«Հայաստանի աշխատավոր», 16 ապրիլի 1919թ.

86-ՐԴ ՆԻՍՏ

27 ապրիլի 1919թ.

Հայաստանի Խորհրդարանի արձակուրդը

Հայաստանի Խորհրդի ամսոյս 27-ի նիստին, 4 ժամյա վիճաբանություններեն ետքը, որոշվեցավ մեկ ամիս արձակուրդ տալ խորհրդին՝ անոր իրավունքները վերապահելով կառավարության: Քվեարկության ատեն էսէռ և էսդեկ ֆրակցիաները դուրս ելան նիստեն, իսկ մյուս երեք ֆրակցիաները միաձայնությամբ ընդունեցին հիշյալ որոշումը:

«Աշխատանք», 29 ապրիլի 1919թ.